ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՍԱՄՎԵԼ ԱԲԵՂԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԳՀԴ

ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱՋՐՈՒՅՑՆԵՐԸ

Մակարավանքի վանական համալիրը գտնվում է Աղստեւի հովտում՝ Պայտաթափ լեռան ստորոտի՝ սաղարթախիտ ծառերով շրջապատված հարթության վրա: Ծովի մակարդակից 1200-1500 մ բարձրություն ունեցող վանքի հեռավորությունը Իջեւան քաղաքից 25 կմ է, խճուղուց՝ 12 կմ, Աչաջուր գյուղի հարավարեւմտյան կողմից՝ 7 կմ:

Մինչ Ի. դարի կեսը վանական համալիրը գրեթե անհայտ էր գիտությանը: Հայտնի էին միայն նախկին տեղագրողների՝ Սարգիս վրդ. Ջալալյանի եւ Մակար եպս. Բարխուդարյանի խիստ համառոտ նկարագրությունները, ինչպես նաեւ ոչ ամբողջապես վերծանված վիմագիր մի քանի արձանագրություններ[1]*:*

Մակարավանքի առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է բանասեր Գ. Սարգսյանը. նա, դեռեւս 1950-ական թթ. ղեկավարելով վանական համալիրի մաքրման աշխատանքները, կարողացել է միաժամանակ հետազոտել համալիրի շինությունները, ընդօրինակել ու վերծանել պահպանված վիմագիր արձանագրությունները[2]*:*

---

[1] **Սարգիս վրդ. Ջալալյան**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Ա., Տփխիս, 1842, էջ 147-154. հմմտ. **Մակար եպս. Բարխուդարյան**, Արցախ, Բաքու, 1895, էջ 373-376:

[2] **Գ. Սարգսյան**, Մակարավանք, «Էջմիածին», Բ., 1954, էջ 32-34. այս հոդվածի շարունակությունը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի հաջորդ համարներում՝ Գ., 1954, էջ 19-22, Դ., էջ 30-36, Ե., էջ 46-52:

Վանական համալիրի երեք եկեղեցիները մատենագրության մեջ ցայսօր հայտնի են հետեւյալ անուններով՝

ա. Հին եկեղեցի,

բ. Մեծ եկեղեցի,

գ. Փոքր կամ Ս. Աստվածածին եկեղեցի:

Մեր ուսումնասիրության ընթացքում Հայաստանի ազգային արխիվի անտիպ ձեռագրերից մեկում գտանք 1872 թ. նվիրատվությունների մի ցուցակ, որում հստակ նշված է՝ վանահայր Գրիգոր վրդ. Տեր-Գեւորգյանցի պաշտոնավարության ժամանակ աստվածասեր հավատացյալները Մակարավանքի Ս. Աստվածածին (Մեծ եկեղեցի) եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ (Հին եկեղեցի) եկեղեցիներին, ինչպես նաեւ նոր կառուցվող կրթօջախին նվիրել են 172 ռուբլի եւ 43 կոպեկ[3]:

Այս ձեռագիրը հիմք ունենալով՝ կարող ենք հստակ ասել, որ Հին եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի անունով է, սակայն ե՞րբ է օծվել այն կամ ո՞ւմ կողմից, ցավոք, դեռեւս հայտնի չէ:

Մինչ օրս պահպանված ժողովրդական ավանդազրույցի համաձայն՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին սկզբում անվանվել է «Մակարի վանք», որի հիման վրա հետագայում վանական ողջ համալիրը կոչել են «Մակարավանք»: Համալիրն այսպես է անվանվում մինչ օրս:

Հարկ ենք համարում նշել, որ Մակարավանք անվամբ Ժ. դարի մի կենտրոնագմբեթ (ներկայումս խոնարհված) եկեղեցի կա նաեւ ՀՀ Արթիկի շրջանի Պեմզաշեն ավանից 1.5 կմ դեպի արեւելք. մինչ օրս լուսաբանված չէ, թե այս եկեղեցին ինչու են Մակարավանք անվանել:

Հայաստանի սահմաններից դուրս Մակարավանք անունը կրող վանական մի համալիր Կիպրոսում ենք ունեցել, որը կառուցվել է 1111 թ.՝ տեղի հայ համայնքի միջոցներով: 1974 թ. հուլիսին թուրքերի կողմից բռնազավթված Կիպրոսի հյուսիսային հատվածը մինչ օրս նրանց իշխանության տակ է գտնվում: Միայն 2004 թ.՝ Կիպրոսի հույն-թուրքական սահմանի բացումից հետո, հայ ուխտավորները 2007 թ. ամռանը կարողացան այցելել Մակարավանք, որը, սակայն, արդեն ավերված էր: Այս վանքի անվանումը, ըստ նախկին կիպրահայոց կաթողիկոսական փոխանորդ Վարուժան արք. Հերկելյանի, կապված է Ս. Մակար Անապատականի (չուրջ 309-404 թթ.) անվան հետ, որի կենսագրական տեղեկությունները պահպանվել են «Վարք հարանց»-ում[4]:

---

[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 1640, թ. 87, ձեռագիր, բնագիր:

[4] «Վարք սրբոց հարանց», Վենետիկ, 1855, էջ 89:

Անդրադառնալով բուն հարցին՝ նշենք, որ ժողովրդական ավանդազրույցի համաձայն՝ եկեղեցին կառուցած վարպետի անունը եղել է Մակար. վերջինս իր վաղամեռիկ որդու հիշատակի համար Տիրոջ առաջ ուխտ էր արել մի հոյակապ տաճար կառուցել:

Բանավոր պատումների որոշ տարբերակներ փոխանցվել են սերնդեսերունդ, սակայն դրանց մեջ հիշատակություն չկա վանական համալիրի տարածքի ընտրության վերաբերյալ: Մի քանիսը, որոշ շեղումներով, վկայում են, որ վարպետ Մակարը եկեղեցու տեղն ընտրելուց հետո խոստանում է՝ մինչեւ կառուցումը չավարտի, դուրս չի գա այդ տարածքից: Շուտով սկսվում են եկեղեցու կառուցման աշխատանքները:

Կառուցվող եկեղեցու քարերը բերվում էին վանական համալիրից մոտ 1.5 կմ դեպի հարավ-արեւմուտք ընկած Պիպիս կոչվող վայրից: Հենց այս վայրում էր աշխատում եւ իր վարպետությամբ աչքի ընկնում վարպետ Մակարի միակ կենդանի որդին, որը կարմրավուն մեծ քարերը փորձում էր հղկել, որպեսզի նույնքան գեղեցիկ ու վայելուչ լիներ եկեղեցու շարվածքը:

Այս աստվածահաճո աշխատանքին իրենց կարեւոր մասնակցությունն են բերել նաեւ մոտակա բնակավայրերի բնակիչները: 1950-ականներին գրի առնված մի զրույց վկայում է, որ Գերանիկ անունով մի աղջիկ եւս մասնակցել է եկեղեցու շինարարությանը: Անվան ստուգաբանությունը կապվում է գերանի հետ, որի երկու ծայրերից կախված դույլերով աղջիկը ջուր է հասցրել եկեղեցու կառուցմանը մասնակցողներին[5]*:*

Հավանաբար, աղջկա անվան պահպանումն ու վերջինիս հետ կապված ավանդազրույցի՝ դարեդար փոխանցման հիմնական պատճառը այդ աղջկա՝ եկեղեցաշինությանը անմիջապես մասնակցած իգական սեռի միակ ներկայացուցիչը լինելն էր:

Պատմում են՝ Գերանիկը եկեղեցու կառուցման համար անհրաժեշտ ամբողջ ջուրը միայնակ է բերել աղբյուրից, որը գտնվում էր վանական համալիրից մոտ 80 մ հեռավորության վրա՝ դարպասից հյուսիս-արեւելք: Գերանիկն այդ աշխատանքը կատարել է սիրով եւ անտրտունջ. դրա վառ ապացույցը ավանդազրույցի այն վկայությունն է, ըստ որի, մի օր ջուր բերելիս Գերանիկը վայր է ընկնում. վարպետ Մակարն ու մյուս շինարարները, տեսնելով վայր ընկած աղջկան, օգնության են շտապում եւ նոր միայն նկատում, որ փայտից կախված դույլերով ջուր կրելու ընթացքում

[5] Հարկ ենք համարում նշել, որ այս ավանդազրույցը Աչաջուր գյուղի բնակիչներից ենք գրի առել:

աղջկա ուսը վնասվել է: Ի զարմանս վարպետի եւ մյուս ականատեսների՝ Գերանիկը լուռ ծածկում է ուսը եւ անտրտունջ շարունակում իր ամենօրյա գործը:

Ցավոք, այդ աշխատանքների ընթացքում Գերանիկը հիվանդանում է անբուժելի հիվանդությամբ եւ կնքում իր մահկանացուն: Վարպետ Մակարն ու մյուս շինարարները Գերանիկին թաղում են կառուցվող եկեղեցու ետնամասում, որտեղ նա ապրում էր (ներկայիս մատուռի հյուսիսային պատի կողքին): Այս աստվածասեր, նվիրյալ աղջկա մահից հետո աղբյուրը, որտեղից ջուր էր բերում, ի հիշատակ նրա՝ ժողովուրդը «Գերանի աղբյուր» անվանեց:

Ահա այսպես, աստվածասեր մարդկանց շնորհիվ, աստիճանաբար վեր էին բարձրանում եկեղեցու զարմանահրաշ պատերը:

Վարպետ Մակարը, երբ արդեն եկեղեցու գմբեթի ծածկի կամարներն էր կերտում իր իսկ կոփածո քարե շարվածքով, նկատում է, որ բերված քարերը անհամաչափ են հղկված: Ծանոթ լինելով քարտաշ որդու աշխատանքին՝ մի պահ զարմանում եւ միեւնույն ժամանակ բարկանում է որդու վրա նման աշխատանքի համար: Քարեր բերող գյուղացիներին վարպետը հարցնում է, թե ինչ է պատահել որդուն: Գյուղացիները, անակնկալի գալով, պատասխանում են, որ տղան վատառողջ է, եւ այդ քարերը մեկ ուրիշն է տաշում: Սակայն մի քանի օր անց գյուղացիները, չնկատելով հանգստանալու նպատակով պատին պառկած վարպետին, խոսում են նրա որդու անզգույշ աշխատանքի մասին, որն էլ վերջինիս մահվան պատճառն էր դարձել: Վարպետ Մակարը, լսելով ողջ ճշմարտությունը, կաթված է ստանում եւ պատից ցած ընկնելով՝ մահանում:

Վարպետ Մակարին թաղում են եկեղեցու պատի տակ: Թեեւ վարպետը չի ավարտում եկեղեցու կառուցումը, այնուամենայնիվ, ժողովուրդը վանքը նրա անունով կոչում է «Մակարի վանք»:

Ցավոք, ավանդազրույցը չի պահպանել վարպետ Մակարի մարմնի ամփոփման ճշգրիտ վայրը. մինչ օրս հայտնի չէ, թե որ պատի տակ են նրան թաղել:

Որոշ զրույցներում հիշատակվում է, թե վարպետ Մակարը, քարերի անհամաչափությունից հասկանալով որդուն պատահած դժբախտության մասին, իրեն գիտակցաբար պատի վրայից ցած է գցել[6]:

---

[6] **Ի. Էլլարյան**, Աղստեւի հովտի պատմության եւ կուլտուրայի հուշարձանները, Երեւան, 1980, էջ 61:

Կարծում ենք՝ այս վարկածը այնքան էլ համոզիչ չէ. որդու մահվան բոթն անգամ չէր կարող վարպետի նման աստվածասեր եւ աստվածընկալ մարդուն ինքնասպանության մղել, քանզի հավատացյալը քաջ գիտակցում է, որ ինքնասպանությունը հավասարազոր է աստվածհայհոյությանը, այն աններելի ու անքավելի մեղք է:

Վանական համալիրի անվան հետ կապված մեկ այլ ավանդություն եւս գոյություն ունի, սակայն Ի. Էլլարյանը այն կապել է Կիրանցի վանքի հետ:

Համաձայն այդ ավանդության՝ Մեծ կամ Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը մասնակցողների համար կեսօրվա ճաշը մեծ կաթսայում էր պատրաստվում: Մի օր ագռավ է թառում կրակի վրա եփվող կերակրի կաթսայի գլխին՝ ծառի վրա: Աշխատող վարպետներն ու շինարարները աշխատանքային գործիքներով եւ բարձր ճիչերով փորձում են հեռացնել թռչունին, սակայն՝ ապարդյուն: Մարդիկ սկսում են նույնիսկ կատակել ու ասել միմյանց, թե այնքան կկռռա, մինչեւ մի վատ լուր լսեն: Ագռավը, զգալով, որ մարդիկ փորձում են հեռացնել իրեն, նետվում է եռացող կաթսայի մեջ: Աշխատողներից ոմանք նկատելով, որ թռչունն ընկավ եռացող կերակրի մեջ, մոտենում եւ ապշահար են լինում. նույն կաթսայում, ագռավից բացի, նաեւ թունավոր օձ էր եփվում: Այս ամենից հետո մարդիկ հասկանում են, որ ագռավը կռկռոցով ցանկանում էր իրենց ուշադրությունը հրավիրել կերակրում եփվող թունավոր սողունի վրա: Ըստ ժողովրդի պատմածի՝ ագռավը փրկում է եկեղեցու շինարարների կյանքը: Դրանից հետո, երբ եկեղեցու աշխատողներից որեւէ մեկն անհանգստանում էր, մեկը մյուսին, իբրեւ մխիթարական խոսք, ասում էր. «Մի՛ մտածիր, Աստված ագռավին կուղարկի, եւ որեւէ բան չի պատահի»: Այս դեպքից հետո վանական համալիրը, «Մակարավանք» անվանը զուգահեռ, սկսում է կոչվել նաեւ «Ագռավավանք», որը հազվադեպ է կիրառվում: Սակայն ագռավի քանդակը առկա է թե՛ Մեծ եկեղեցու խորանի ճակատին եւ թե՛ Փոքր եկեղեցու հյուսիսային պատին:

Մինչ այսօր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման հստակ թվականն անհայտ է, սակայն Սարգիս վրդ. Ջալալյանը եկեղեցին Զ. դարի կառույց է համարում[7]*, իսկ հետագա ուսումնասիրողների առաջ քաշած վարկածների համաձայն՝ այն ավելի ուշ շրջանի շինություն է:*

Օրինակ՝ Ի. Էլլարյանն Աղստեւի հովտին նվիրված իր աշխատության մեջ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին համարում է ԺԱ.-ԺԲ. դարերի կա-

[7] **Սարգիս վրդ. Ջալալյան**, նշվ. աշխ., էջ 147:

ռույց[8]: Իսկ ըստ Ս. Ավագյանի եւ Հ. Ջամփոլադյանի՝ Մակարավանքը Ժ.-ԺԱ. դարերի կառույց է[9], այսինքն՝ վանական համալիրի մյուս եկեղեցիներին գրեթե ժամանակակից, որը, վստահաբար, անընդունելի է, քանի որ հստակ երեւում են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու եւ վանական համալիրի մյուս եկեղեցիների միջեւ ճարտարապետական ոճերի ու կառուցման ժամանակաշրջանի տարբերությունները:

Վանական համալիրին նվիրված իր գրքույկում Հակոբ Մանուչարյանը եկեղեցու կառուցման ժամանակաշրջանը համարում է Թ.-Ժ. դդ.[10], իսկ հոր՝ Հենզել Մանուչարյանի հետ աշխատասիրած եւ իրենց հայրենի Աչաջուր գյուղին նվիրված մեկ այլ գրքույկում՝ Ը.-Թ. դդ.[11], որն ավելի հավանական է: Սակայն կարեւոր ենք համարում նշել, որ մեր վանահայրության շրջանում առիթ ունեցանք ծանոթանալու Հենզել Մանուչարյանի հետ, ով 2013 թ. ամռանը մի քանի անգամ այցելեց Մակարավանք: Ուշագրավ է, որ Հ. Մանուչարյանն այդ այցելությունների ժամանակ իր հետ եկած հյուրերին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմությունը ներկայացնելիս կառուցման հավանական ժամանակաշրջանը Է., նույնիսկ ավելի վաղ՝ Զ. դարն էր համարում: Եկեղեցու կառուցման հետ կապված այս տարաձայնությունները, հավանաբար, առաջ են եկել պատերի շարվածքի ուսումնասիրությունից, քանի որ մինչեւ ծածկի կամարների հիմքերը շարված են կոփածո կարմրավուն, իսկ դրանից վեր՝ մինչեւ գմբեթի ծայրը՝ սրբատաշ բաց մոխրագույն (աղյուսագույն) քարերով:

Չգիտենք՝ ինչ աղբյուրներից է օգտվել Սարգիս վրդ. Ջալալյանցը, երբ եկեղեցին համարել է Զ. դարի կառույց, բայց մենք եւս համամիտ ենք լուսահոգի վարդապետի հետ:

Մեր կարծիքով՝ եկեղեցու հիմքերի ու պատերի կառուցումն սկսվել է Զ. դարավերջին կամ Է. դարասկզբին, իսկ վերջնական տեսքի բերվել է ընդհանուր վանական համալիրի կառուցումից փոքր-ինչ ուշ՝ Թ. դարավերջին կամ Ժ. դարասկզբին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին տեղակայված է ներկայիս վանական համալիրի հյուսիսարեւելյան մասում: Եկեղեցին ներսից խաչաձեւ է (10.5x8.5 մ), իսկ դրսից՝ քառանկյուն: Միակ մուտքը գավիթից է՝ հինգ շարք խալխլված քարե աստիճաններով: Մուտքի աջ եւ ձախ կողմերում

---

[8] **Ի. Էլլարյան**, նշվ. աշխ., էջ 59:

[9] «Դիվան հայ վիմագրության», պր. Զ., Իջեւանի շրջան, Ս. Ավագյան, Հ. Ջամփոլադյան, Երեւան, 1977, էջ 152:

[10] **Հ. Մանուչարյան**, Մակարավանք, Երեւան, 2002, էջ 6:

[11] **Հ. եւ Հ. Մանուչարյաններ**, Աչաջուր, Երեւան, 2009, էջ 26:

կան խցեր՝ առանց պատուհանների. դրանց մուտքերը եւս գլխավոր մուտքի աջ ու ձախ կողմերից են: Եկեղեցին ներսից լուսավորվում է գմբեթի չորս կողմերից եւ արեւելյան, հյուսիսային ու հարավային պատուհաններից: Ցավոք, այն դեռեւս չունի ո՛չ մուտքի, ո՛չ էլ խցերի ու ավանդատների դռներ, ինչպես նաեւ՝ պատուհաններ: Բացի խցերից, եկեղեցին ունի նաեւ ավանդատներ՝ խորանի աջ եւ ձախ մասերում՝ մեկական պատուհանով: Խորանը փոքր-ինչ շրջանաձեւ է. Սուրբ Սեղան չկա: Խորանի պատերին կան երեք խորդանոցներ: Եկեղեցին, ինչպես արդեն նշել ենք, կառուցված է կարմրավուն, խոշոր քարերով եւ կրաշաղախով: Այդ մեծ կարմրավուն քարերը հիմքից բարձրանում են մինչեւ ծածկի կամարները, որից հետո մինչեւ գմբեթի ծայրը շարվածքը բաց մոխրագույն սրբատաշ քարով է: Գմբեթի թմբուկը գլանաձեւ է, որտեղ իր ուրույն տեղն է գտել քանդակազարդ գոտին:

Եկեղեցու խորանը սովորականից փոքր-ինչ բարձր է: Ձախակողմյան դասից չկան խորանի ճակատի մի քանի սրբատաշ քարեր: Ձկան նաեւ խորան բարձրացող աստիճանները, որոնք, ըստ ԺԹ. դարի 70-ական թթ. ուսումնասիրությունների, թեեւ խալխլված, բայց եղել են (աջակողմյան դասի կողմից)[12]:

Խորանի ճակատը թեեւ աջակողմյան դասից փոքր-ինչ վնասված է, սակայն քանդակազարդ է՝ ամփոփված շեղանկյունաձեւ շրջանակների մեջ: Այն ամբողջությամբ երկրաչափական, բուսական եւ կենդանական պատկերներով նուրբ աշխատանք է, որը, հավանաբար, իր վերջնական ձեւը ստացել է գմբեթի կառուցման հետ միասին:

Եկեղեցու պատերի կարմրավուն մեծ քարերը երեւում են միայն դրսից, իսկ ներսից՝ ոչ, քանի որ ներքին պատերը, մինչեւ գմբեթի սրբատաշ քարերը, ծածկված են ծեփով, որը, մեր կարծիքով, ավելի ուշ շրջանի՝ ԺԷ.-ԺԸ. դդ. գործ է:

Այսօր պատերի ծեփի մի զգալի մասը պոկված է, իսկ մնացյալ մասը՝ խոնավությունից կանաչած:

Եկեղեցու հատակն ու խորանը, հավանաբար, նույն գմբեթի հետ են կառուցվել: Հատակը, բացի ավանդատներից ու խցերից, ամբողջությամբ սրբատաշ է:

Նշենք նաեւ, որ վանական համալիրը գտնվում է սողանքային գոտում, սակայն լուրջ վտանգը հենց այս հյուսիսարեւելյան հատվածում՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու եւ գավիթի կողմում է:

[12] «Դիվան հայ վիմագրության», էջ 152:

Եկեղեցու վիմագրությունն աղքատ է: Կան վիմագիր երեք արձանագրություններ, որոնք նվիրատվական բնույթի են եւ եկեղեցու պատմության անհայտ մնացած շատ հարցերի լուսաբանման համար կցկտուր տեղեկություններ են հաղորդում:

Արձանագրություններից մեկը գտնվում է արտաքին պատի արեւելյան մասի հյուսիսային կողմում՝ փոքրիկ շրջանակ կազմող մուգ կարմրագույն քարի վրա: Արձանագրությունն ութ տող է. այն անձրեւաջրերի ու քարերի քայքայման պատճառով դժվարընթեռնելի է դարձել: Այս արձանագրությունը «Դիվան հայ վիմագրության» Զ. պրակում 276 համարի տակ է դրված:

Արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Գ. Սարգսյանը[13], սակայն հեղինակը չի անդրադարձել վերջինիս բովանդակությանը:

Դատելով այս արձանագրության պահպանված հատվածից՝ կարող ենք ասել, որ այն ինչ-որ նվիրատվության վերջնամասն է, որտեղ գրված են հատուցման եւ անեծքի տողեր: Նման բովանդակությամբ արձանագրություններ համալիրի մյուս եկեղեցիների պատերի վրա եւս կան: Օրինակ՝ ըստ Ս. Աստվածածին (Մեծ) եկեղեցու հարավային պատի դրսի կողմի արձանագրության՝ համալիրին նվիրաբերվում է այգի եւ նշվում, որ ով «խափանի» (վերցնի) այգին վանքից, անիծված լինի հայրապետների կողմից: Այս ոճը շատ է կիրառվել ԺԱ.-ԺԲ. դդ. վիմագիր արձանագրություններում:

Անդրադառնալով առաջին արձանագրությանը՝ նշենք, որ այդ հատվածի սկզբնամասը գտնվում է նույն պատի հարավային հատվածում: Հավանաբար, վերջին վերանորոգումների ընթացքում (1974-1987 թթ.) քարերը տեղաշարժվել են, իսկ կառուցող վարպետները կարեւորություն չեն տվել արձանագրություններին. քարերը միմյանցից հեռացրել են՝ ըստ իրենց հարմարության: Հարավային հատվածում եղած այդ արձանագրությունից ներկայումս ընթերցողին հասանելի են միայն 1-ին, 2-րդ եւ 8-րդ տողերից մի քանի տառեր միայն: Սակայն հենց այդ մի քանի տառերի վրա հիմնվելով՝ Ս. Ավագյանն ու Հ. Ջամփոլադյանն արձանագրությունը համարել են թվագիր[14], որը, ըստ նրանց, իրականացվել է Հովհաննես Ա. վանահոր պաշտոնավարության շրջանում՝ 1198-ից առաջ:

Մյուս երկու վիմագրերը եկեղեցու ներսում են գտնվում: Եկեղեցու պատերի արձանագրություններին առաջինն անդրադարձած Գ. Սարգսյա-

---

[13] **Գ. Սարգսյան**, «Էջմիածին», Դ., 1954, էջ 31:

[14] «Դիվան հայ վիմագրության», էջ 156:

նը դրանք չի հրապարակել: Պատճառը, ըստ հեղինակի, եկեղեցում տիրող մթությունն էր[15]*:*

Եկեղեցու ներսի վերոհիշյալ երկու արձանագրությունները գտել են ճարտարապետներ Բ. Արզումանյանն ու Շ. Ազատյանը՝ 1953 թ. եկեղեցին չափագրելիս[16]*:*

Այս արձանագրություններից մեկը գտնվում է եկեղեցու խորանի կիսակլոր հատվածի հարավային մասում՝ իրար միացած երեք քարերի վրա: Այն քանդակված է հինգ տողով: Արձանագրությունից անմիջապես հետո՝ մինչեւ խորանի հատակը, սվաղված է: Արձանագրությունը դժվար է ընթերցվում, քանի որ հողմահարված է:

Արալանսա[17] *անունով մեկը, որ ցայսօր անհայտ է պատմությանը, եւ որի անունը չկա նաեւ եկեղեցու մյուս արձանագրություններում, Հովհաննես Ա. վանահոր պաշտոնավարության շրջանում նվիրատվություն է արել Մակարավանքին: Երրորդ տողի «ԴԱԿԱՆԻ ԵԻ ԱՅԼ ԱՐԴԻԻՆՔ»-ից կարելի է եզրակացնել, որ նվիրատուն համալիրին որոշ չափով դահեկան է նվիրել: Ցավոք, նախորդ տողի տառաշարքում կան եղծված հատվածներ, որտեղ եւ, հավանաբար, եղել է դահեկանի չափը:*

Մեր կարծիքով՝ այդ նվիրատվությունների շնորհիվ է առաջին անգամ վերանորոգվել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Եկեղեցու ներսում հինգ տողից կազմված մյուս արձանագրությունը գտնվում է խորանի կիսակլոր պատի կենտրոնում՝ չորս քարի վրա: Ինչպես նախորդ երկու արձանագրությունները, այս մեկը եւս նվիրատվական բնույթի է, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում:

Ըստ արձանագրության՝ Ականջ անունով մի իշխան Հովհաննես Ա. վանահոր պաշտոնավարման շրջանում իրեն պատկանող երկու ջրավազանների ջուրը վանքապատկան հողերի ոռոգման նպատակով երկու գիշեր վանքին է տրամադրել: Նշենք նաեւ, որ այս իշխանը համալիրի Ս. Աստվածածին (Փոքր) եկեղեցու կառուցմանը եւս իր դրամական օժանդակությունն է բերել, որի մասին վկայությունը վերոնշյալ եկեղեցու գլխավոր խորանի արեւմտյան պատին է: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին վերանորոգվել է մի քանի անգամ: Առաջին վերանորոգումը, հավանաբար, իրականացվել է Հովհաննես Ա. վանահոր պաշտոնավարության սկզբում՝ մոտ 1150-1160, իսկ վերջինը՝ 1974-1987 թթ.:

---

[15] **Գ. Սարգսյան**, Մակարավանք, «Էջմիածին», Դ., 1954, էջ 30:
[16] Անդ:
[17] «Դիվան հայ վիմագրության», էջ 157:

РЕЗЮМЕ

Если не считать кратких описаний архимандрита Саргиса Джалаляна и епископа Макара Бархударяна, то следует отметить, что монастырский комплекс Макараванк до середины XX века был почти неизвестен науке. В статье в основном представлены народные предания о Макараванке, согласно которым церковь св. Григория Просветителя первоначально называлась “Макари ванк” - “монастырь Макара”. Это название было позднее перенесено на весь монастырский комплекс. Церковь же была названа так по имени ее строителя мастера Макара, который дал перед Господом обет построить великолепный храм в память о своем безвременно умершем сыне.

SUMMARY

The monastic complex of Makaravank was almost unknown until the mid 20th century, if short descriptions by Archimandrite Sarkis Jalalian and Bishop Makar Barkhoudarian are not taken into account. The article mainly states folk legends about Makaravank, according to which St. Gregory the Illuminator Church was first called “Monastery of Makar”, and for this reason, later the whole monastic complex was named “Makaravank” (Monastery of Makar). The church was named after builder Makar, who had made an oath before the Lord to build a magnificent church for the memory of his prematurely dead son.